ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արևելյան գործընկերության երկրների ԵՄ ջրային նախաձեռնություն+ (EUWI+) ծրագրի շրջանակներում, ջրի միջազգային գրասենյակի կողմից կազմակերպած աշխատաժողովին մասնակցության վերաբերյալ

Համաձայն Ջրային կոմիտեի 21.02.2020 թվականի թիվ 38-Ա հրամանի, սույն թվականի փետրվարի 25-ին և 26-ին, Մոնիթորինգի և վերլուծությունների վարչության պետի տեղակալի ժ/պ Գևորգ Ալոյանը Վրաստանի Հանրապետությունում, մասնակցել է արևելյան գործընկերության երկրների ԵՄ-ի կողմից ֆինանսավորվող ԵՄ ջրային նախաձեռնություն+ (EUWI+) ծրագրի շրջանակներում, ջրի միջազգային գրասենյակի կողմից կազմակերպված տարածաշրջանային աշխատաժողովին, որը նվիրված էր շահագրգիռ կողմերի ներառմամբ և հանրային խորհրդատվությամբ գետավազանային կառավարման պլանների մշակմանը: Աշխատաժողովին Հայաստանի Հանրապետությունից մասնակցում էին ՀՀ շրջակա միջավայրի նախարարության, ինչպես նաև նշված ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետությունում գործունեություն իրականացնող հասարակական կազմակերպության աշխատակիցները:

Աշխատաժողովին, կազմակերպիչներից բացի, մասնակցում էին նաև՝ Ուկրանիայի, Բելառուսի, Մոլդովայի, Վրաստանի և Ադրբեջանի պատվիրակությունները:

Աշխատաժողովի ընթացքում մասնակից պետությունների (այդ թվում՝ Հայաստանի) ներկայացուցիչների կողմից կոնկրետ օրինակների տեսքով ներկայացվեցին իրենց կատարած աշխատանքները, կապված հանրային խորհրդատվությամբ գետավազանային կառավարման պլանների մշակման հետ, ներկայացվեցին նաև աշխատանքների իրականացման մեթոդներ և գործիքակազմ, տեղեկատվական նյութեր, ջրավազանային խորհուրդների դերը իրականացվող գործընթացներում, առանձին խմբերով կազմակերվեցին պրակտիկ վարժություններ, տեղի ունեցավ մտքերի փոխանակում և սեմինարի արդյունքների ամփոփում:

Հայաստանում դեպի ջրային ռեսուրսների ապակենտրոնացված կառավարում անցում կատարելու հիմնական գործիքներից է գետավազանային կառավարման պլանների մշակումը, որը ՀՀ շրջակա միջավայրի նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կողմից հայտարարվել է գերակայություններից մեկը: 2008-2010թթ. ժամանակահատվածում Հայաստանում միջազգային տարբեր ծրագրի և նախաձեռնությունների աջակցությամբ մշակվել են գետավազանային կառավարման չորս պլանների նախագծեր (Դեբեդ, Աղստև, Մեղրիգետ և Մարմարիկ): Վերոնշյալ 4 ԳԿՊ-երի նախագծերի և Եվրոպական միության ջրային նախաձեռնության շրջանակներում ջրային ռեսուրսների

համապարփակ կառավարման ազգային քաղաքականության երկխոսության շրջանակներում իրականացված խորհրդակցությունների վրա հիմնվելով՝ 2011թ. փետրվարի 3-ին ՀՀ կառավարության արձանագրային նիստը ընդունել է թիվ 4 որոշումը «Ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը հաստատելու մասին»:

2016-2017թթ. ընթացքում մշակվել և հաստատվել են Արարատյան, Հարավային և Ախուրյանի ջրավազանային կառավարման պլանները, որոնց մշակման և իրականացման ընթացքում անհրաժեշտություն է առաջացել վերանայել ջրավազանային կառավարման մոդելային պլանի բովանդակությունը՝ համահունչ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության արդի պահանջներին:

Ներկայումս ընթացքի մեջ են Սևանի և Հրազդանի ջրավազանային կառավարման պլանների մշակման աշխատանքները:

Այս ծրագիրը շարունակական է և հետագա աշխատանքներում ջրային կոմիտեն որպես շահագրգիռ կողմ ևս պետք է իր մասնակցությունն ունենա, որի արդյունքներով կարող են բարելավել ջրօգտագործման և ջրային համակարգի կառավարման գործընթացները: